## Իրավաբանական անգլերենի դասընթացներ

08.06.2011 11:52

Ամերիկյան իրավաբանների ընկերակցություն CEELI Inc.-ի հայաստանյան ներկայացուցչություն

Իրավաբանական անգլերենի դասընթացներ

Հայտարարություն

Ամերիկյան իրավաբանների ընկերակցություն CEELI Inc.-ի հայաստանյան ներկայացուցչությունը (ABA CEELI) 2011 թ. հունիսիի 14-ից վերսկսում է իր իրավաբանական անգլերենի դասընթացները լեզվում առաջադիմող ուսանողների համար: Դասընթացը կտևի 2011թ. հունիսի 14-ից հուլիսի 28-ը, յուրաքանչյուր երեքշաբթի և հինգշաբթի ժամը 18:00-19:30:

Դասընթացներում արծարծվելու են իրավական թեմաներ միայն անգլերեն լեզվով: Դասերը անցկացվելու են ազգությամբ ամերիկացի դասընթացավարների կողմից:

Դասընթացները կազմակերպվում են անվճար հիմունքներով և փաստաբանների, իրավաբանների կամ իրավաբանական ոլորտում աշխատողների, ուսանողների համար Ամերիկյան իրավաբանների ընկերակցություն CEELI Inc.-ի հայաստանյան ներկայացուցչության գրասենյակում (Ալեք Մանուկյան 9, Ամերիկյան համալսարանի բիզնես կենտրոն, 4-րդ հարկ, 411 սենյակ):

Գրանցվելու և լրացուցիչ տեղեկությունների համար խնդրում ենք զանգահարել հետևյալ հեռախոսահամարներով` (+37410) 554991, (+37410) 556449:

*Կանոնավոր հաճախումը պարտադիր է:*

Շնորհակալություն

Հարգանքներով`

Ամերիկյան իրավաբանների ընկերակցության Իրավական նախաձեռնություն Կենտրոնական Եվրոպայի և Եվրասիայի համար Հայաստանյան ներկայացուցչություն (ABA ROLI)

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })